ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 88 - Ա
07 մայիսի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ N 4 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգ>>-ի 9-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջները

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ներմարզային երթուղիների հատկացման մարզային մրցութային հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 6-ի N 4 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա.Հակոբյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
Հաստատված է
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2014 թ. մայիսի 7 -ի
թիվ 88-Ա որոշմամբ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ներմարզային երթուղիների հատկացման մարզային մրցութային հանձնաժողովի

06 մայիսի 2014թ. ք. Գավառ

2014 թվականի մայիսի 6-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի մարզային մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի

նախագահ՝ Ա. Հակոբյան
քարտուղար՝ Գ. Խաչատրյան
անդամներ՝ Կ. Հակոբյան
Կ. Բաղդասարյան
Գ. Գրիգորյան

Օրակարգում

<<Գավառտրանս>> ՍՊ ընկերության կողմից սպասարկվող Գավառ(Ա/Կ) - Գեղարքունիք - Գավառ թիվ 4 ներմարզային ավտոբուսային երթուղում ներգրավված թվով չորս ավտոբուսները սպասարկումից հանելու մասին:

Քննարկվեց՝

<<Գավառտրանս>> ՍՊ ընկերության տնօրենի 2014 թվականի ապրիլի 29-ի թիվ ԳՄ-12 գրությունը, համաձայն որի առաջարկվում է Գավառ(Ա/Կ)-Գեղարքունիք-Գավառ թիվ 4 ներմարզային ավտոբուսային երթուղին սպասարկող ՊԱԶ-672Մ մակնիշի 490US31 պետհամարանիշի /03-32Լ դեղին հիմնագույնի համարանիշ/ 1989 թվականի արտադրության, ՊԱԶ-672Մ մակնիշի 616UL31 պետհամարանիշի /03-38Լ դեղին հիմնագույնի համարանիշ/ 1986 թվականի արտադրության, ՊԱԶ-672Մ մակնիշի 622UL31 պետհամարանիշի /03-37Լ դեղին հիմնագույնի համարանիշ/ 1987 թվականի արտադրության և ՊԱԶ-672 մակնիշի 497US31 պետհամարանիշի /03-29Լ դեղին հիմնագույնի համարանիշ/ 1991 թվականի արտադրության ավտոբուսները դուրս գրելու նպատակով հանել երթուղու սպասարկումից, որոնց փոխարեն երթուղու սպասարկման գործում որպես պահուստային ավտոբուսներ ներգրավել Գավառ(Ա/Կ)-Կարմիր-Գավառ թիվ 6 ներմարզային ավտոբուսային երթուղին սպասարկող ՊԱԶ-672Մ մակնիշի 488US31 պետհամարանիշի /03-36Լ դեղին հիմնագույնի համարանիշ/ 1988 թվականի արտադրության և Գավառ(Ա/Կ)-Սևան-Գավառ թիվ 13 ներմարզային ավտոբուսային երթուղին սպասարկող ՊԱԶ-672Մ մակնիշի 346US31 պետհամարանիշի /03-27Լ

դեղին հիմնագույնի համարանիշ/ 1989 թվականի արտադրության պահուստային ավտոբուսները:

Հանձնաժողովը առաջարկեց՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման 9-րդ կետի 10-րդ ենթակետի, 21-րդ կետի և 69-րդ կետի պահանջները <<Գավառտրանս>> ՍՊ ընկերությանը թույլատրել կատարելու առաջարկված փոփոխությունը:

<u>Հանձնաժողովը որոշեց</u>

1. Գավառ(Ա/Կ)-Գեղարքունիք-Գավառ թիվ 4 ներմարզային ավտոբուսային երթուղին սպասարկող ՊԱԶ-672Մ մակնիշի 490US31 պետհամարանիշի /03-32L դեղին հիմնագույնի համարանիշ/ 1989 թվականի արտադրության, ՊԱԶ-672Մ մակնիշի 616UL31 պետհամարանիշի /03-38L դեղին հիմնագույնի համարանիշ/ 1986 թվականի արտադրության, ՊԱԶ-672Մ մակնիշի 622UL31 պետհամարանիշի /03-37L դեղին հիմնագույնի համարանիշ/ 1987 թվականի արտադրության և ՊԱԶ-672 մակնիշի 497US31 պետհամարանիշի /03-29L դեղին հիմնագույնի համարանիշ/ 1991 թվականի արտադրության ավտոբուսները դուրս գրելու նպատակով հանել երթուղու սպասարկումից, որոնց փոխարեն երթուղու սպասարկման գործում որպես պահուստային ավտոբուսներ ներգրավել Գավառ(Ա/Կ)-Կարմիր-Գավառ թիվ 6 ներմարզային ավտոբուսային երթուղին սպասարկող ՊԱԶ-672Մ մակնիշի 488US31 պետհամարանիշի /03-36L դեղին հիմնագույնի համարանիշ/ 1988 թվականի արտադրության և Գավառ(Ա/Կ)-Սևան-Գավառ թիվ 13 ներմարզային ավտոբուսային երթուղին սպասարկող ՊԱԶ-672Մ մակնիշի 346US31 պետհամարանիշի /03-27L դեղին հիմնագույնի համարանիշ/ 1989 թվականի արտադրության պահուստային ավտոբուսները:

2. ՀՀ Գեղարքունիքի մարզպետի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

Հիմք <<Գավառտրանս>> ՍՊ ընկերության տնօրենի 29.04.2014թ. թիվ ԳՄ-12 գրությունը:

Մրցութային հանձնաժողովի

նախագահ՝ Ա. Հակոբյան

քարտուղար՝ Գ. Խաչատրյան

անդամներ՝ Կ. Հակոբյան

Կ. Բաղդասարյան

Գ. Գրիգորյան